

Գուրգեն Մուրադյան

ՎԱՐՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՆԱ ՎԱՇՉԵՎԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Քանալի բառեր - Եվսեբիոս Կեսարացի, Ոսկեդարյան պատմագրություն, Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, պատմության գաղափար, վարքագրություն:

Մուտք

Ընդհանրական եկեղեցու և առհասարակ վաղմիջնադարյան պատմագրության ուսումնասիրման համար առանձնակի նշանակություն ունի հայ ոսկեդարյան պատմագրությունը: Ուստի, տվյալ ժամանակաշրջանի հետազոտողների համար մինչ օրս էլ հայկական պատմագրությունը հետազոտության կարևոր առարկա է:

Այդ առումով կարևոր են ռուս ժամանակակից պատմագետ Իրինա Վաշչևայի¹ հետազոտությունները: Թեև հեղինակը դրանցում իբրև առաջնային սկզբնաղբյուր չի օգտագործում հայկական ոսկեդարյան շրջանի պատմիչների երկերը, սակայն իր մի շարք աշխատություններում անդրադարձնում է դրանց:

Ընդհանուր առմամբ հայ ոսկեդարյան պատմագիրների աշխատություններում միահյուսվում են անտիկ ավանդույթները և նոր ձևավորվող քրիստոնեական աշխարհընկալումները: Դրանով փորձ էր արվում կապել այդ երկու իրարից տարբերվող դարաշրջանները:

Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և այլոց աշխատությունները ընթերցվում և կրկնօրինակվում էին սերունդների կողմից: Նրանք համարվում էին անառարկելի հեղինակություններ: Պատվելի էր նրանցից հղումներ անելը և նրանց գործերը շարունակելը:

Հայ ոսկեդարյան պատմագիրների աշխատությունների և գաղափարների ուսումնասիրությունները մեզ հնարավորություն են տալիս ժամոթանալ տարածության ու ժամանակի միջնադարյան պատկերացումներին, ինչպես նաև հաղորդակցվել բավականին խճճված և բարդ մի հանգույցի՝ պատմության վաղմիջնադարյան ըմբռնմանը:

1. Ագաթանգեղոսի «Հայոց պատմութիւն» երկի հիմնական գործող կերպարները

Ագաթանգեղոսի «Հայոց պատմութիւն» երկն արդի հայագիտության բավականին հակասական սկզբնաղբյուրներից մեկն է: Մինչ օրս ուսումնասիրողները վիճում են հեղինակի անձի և երկի գրման ժամանակի շուրջ²:

Ագաթանգեղոսի գործունեությունը օտար հայագետների շրջանում հաճախ դուրս է մնում հայ ոսկեդարյան գրականության շարքից և պատշաճ ուսումնասիրության չի արժանանում: Ինչ վերաբերում է վաղմիջնադարյան պատմագրության և խմբային ինքնության հարցերով զբաղվող մասնագետներին, ապա այստեղ պատկերը նույնպես գոհացուցիչ չէ:

¹ Ի. Վաշչևան ծնվել է 1974 թ. հունիսի 17-ին: 1996 թ. ավարտել է Նիժնի-Նովգորոդի Ն. Ի Լոբաչևսկու անվան համալսարանը: 2000 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Եվսեբիոս Կեսարացին և պատմության վաղ միջնադարյան կազմավորումը» վերնագրով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այնուհետև 2013 թ. նույնպես հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Ուշ անտիկ ժամանակաշրջանում եկեղեցական պատմությունների ֆենոմենը» խորագրով և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Ներկայումս դասավանդում է Նիժնի-Նովգորոդի է Ն. Ի Լոբաչևսկու անվան համալսարանում: Դասավանդվող առարկաներն են միջին դարերի պատմություն, Բյուզանդական կայսրության պատմություն և մշակույթ, հին հունարեն, լատիներեն, մասագիտության արդի հիմնախնդիրներ, գիտական աշխատանք գրելու հմտություններ և «Բյուզանդական քաղաքակրթությունը» հատուկ դասընթաց: Ի. Վաշչևան միջնադարյան քաղաքակրթությունների պատմության ամբիոնի դոցենտ է:

² Նրա գիտական ղեկավարությամբ մեր հայրենակից Պ. Հակոբյանը 2015 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «5-7-րդ դարերի հայկական պատմագրությունը. ծագում, զարգացում և տիպաբանություն» խորագրով:

³ Ագաթանգեղոսի կյանքի ու գործունեության մասին մանրամասն Տե՛ս Խաչատրյան Ա., Տիրիդատ Մեծ թագավորի հակաադանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Ե., 2010, էջ 4-46:

Ի. Վաչչևան, իբրև հիմնական ուսումնասիրության առարկա ունենալով վաղ միջ-նադարի պատմագրական յուրահատուկ ժանրերից մեկը՝ եկեղեցական պատմագրությունը, միայն հպանցիկ է անդրադարձել Ազաթանգեղոսի խնդրին¹:

Հեղինակը հետաքրքիր ոճով փորձել է ներկայացնել Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի կերպարային զարգացումները՝ համեմատականներ անցկացնելով նաև ժամանակի այլ նշանավոր գործիչների կերպարների ներկայացման հետ:

Գրիգոր Լուսավորչին նկարագրելիս Ազաթանգեղոսի՝ կապաղովկյան Կեսարիայի հիշատակումը, Ի. Վաչչևայի համար կանխամտածված քայլ է: Քաջ հայտնի է, որ կապաղովկյան հայրերի շուրթերով քրիստոնեական փիլիսոփայությունն իր երկրորդ շունչն առավ: Դպրոցի ներկայացուցիչներն առանձնանում էին իրենց փայլուն կրթությամբ և զարգացվածությամբ: Կապաղովկյան փիլիսոփայությունը ավարտում է քրիստոնեական դավանաբանության զարգացման դասական շրջանը²: Միջնադարյան հայ իրականության մեջ կապաղովկյան հայրեր Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու երկասիրությունները մեծ հեղինակություն են վայելել: Դրա վառ վկայությունն է նրանց երկերի կիրառումը հայ մատենագիտության մեջ (Կապաղովկյան երեք մեծ հայրերի գաղափարները և երկերն ուսումնասիրել է Կ. Մուրադյանը³):

Մյուս կարևոր խնդիրն Ազաթանգեղոսի երկի վարքագրական բնույթն է: Այս առումով Ի. Վաչչևան հակված է ընդհանրություններ տեսնել վաղմիջնադարյան նշանավոր պատմագիր Եվսեբիոս Կեսարացու «Կոնստանտինի կյանքը» երկի հետ: Այս երկը կարելի է համարել վարքագրություն⁴: Ք. Տեր-Ղավթյանի կարծիքով վարքագրական-վկայաբանական երկերի կառուցման սկզբունքները մշակվել են 4-րդ դ. արևելահռոմեական կայսրության սահմաններում: Սրբախոսական գրական ժանրի մեջ համատեղվում են վարքերը, վկայաբանությունները, ներբողները, ինչպես նաև սրբերին նվիրված արարողությունները, եկեղեցական կարգերը և երգեցողությունները: Վկայաբանությունները երևան են գալիս քրիստոնեական մեծ հալածանքների շրջանում և սկզբնապես կրել են զուտ դատական հետաքննության բնույթ, կազմված՝ նահատակությանը նախորդող դեպքերի նկարագրությունից, հարցաքննությունից, դատավճռից և մահապատժից: Այս տիպի սրբախոսական երկերը չեն ունենում ո՛չ առաջաբան, ո՛չ վերջաբան և ընդհանրապես չեն շեղվում բուն նյութից: Աստիճանաբար սրանց կողքին ստեղծվում են նաև նահատակներին նվիրված ներբողներ, որտեղ արդեն մեծ տեղ է հատկացվում ճարտասանությանը⁵:

Միլանի հրովարտակից հետո (313 թ.) արևելահռոմեական գրականության մեջ թափ առավ սրբախոսական գրականության մյուս տեսակը՝ վարքագրությունը՝ առաջ անցնելով վկայաբանությունից: Հելլենիստական նշանավոր կենտրոններում կրթություն ստացած եկեղեցական հայրերի մի մասը (Աթանաս Աղեքսանդրացի և այլք) խզեցին կապը հեթանոսական գրականության հետ, մյուսներն էլ (Գրիգոր Նազիանզացի և այլք) որդեգրեցին հունական կենսագրական ավանդույթները՝ նոր շունչ հաղորդելով առկա տեսություններին և համապատասխանեցնելով ժամանակվա պահանջներին:

Չարչարանքների առումով վկայաբանությունը ամենևին չի տարբերվում վարքից: Տիպաբանության պարագայում պատմագիտության մեջ երկուսն էլ հանդես են գալիս իբրև համանման տիպերի համարժեքման օրենք⁶:

Այդ ամենի հետ մեկտեղ Ազաթանգեղոսի «Հայոց պատմութիւն»-ում հանկարծ երևան են գալիս Հռիփսիմյան կույսերի նահատակության խնդիրները: Այս անցումը

¹ Акопян П. , Ващева И., Знаковые персонажи в “Истории Армении” Агатангелоса (Григорий и Трдат), “Вестник” Нижегородского университета им. Н. И. Лобачевского, № 3, 2012, с. 209-213.

² Савреј В. , Каппадокийская школа в истории христианской мысли, М., 2012, с. 21-51.

³ Մանրամասն Տե՛ս Մուրադյան Կ., Բարսեղ Կեսարացիի և նրա «Կեցաւրեան» հայ մատենագիտության մեջ, Ե., 1976; նույնի՝ «Գրիգոր Նազիանզացիի հայ մատենագրության մեջ», Ե., 1983; նույնի՝ «Գրիգոր Նյուսացիի հայ մատենագրության մեջ», Ե., 1993:

⁴ Եվսեբիոս Կեսարացու այս երկը բավականին ընդհանրություններ ունի Հին Հունաստանի նշանավոր գորավարներից և պատմագիրներից Ատտիկայի մեղու անվանվող Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկասիրության հետ:

⁵ Տեր-Ղավթյան Ք., XI-XV դարերի հայ վարքագրությունը, Ե., 1980, էջ 17-18:

⁶ Ավետիսյան Զ., Ե դարի հայ պատմագրության տիպաբանությունը, Ե., 2013, էջ 43-48:

միանաչանակ բացատրված չէ պատմագիտության մեջ: Ի. Վաշչևան միջանկյալ քայլ է համարում դեպի Տրդատ Մեծի կերպարին անցումը՝ կապված նրա դիվահարման խնդրի հետ՝ իբրև պատիժ Հռիփսիմյան կույսերի նահատակության¹:

Հետաքրքիր է, որ Ազաթանգեղոսը հակված է իր երկի հիմնական կերպար տեսնել Գրիգորին, ոչ թե Տրդատ արքային: Նրա համար Տրդատը պատմական ֆոնի կերպար է: Ավելին՝ խնդիրը Գրիգորի աստվածայնության ցուցադրումն է՝ կապված արքայի բժշկության հայտնի տեսարանի և հայոց դարձի հիմնավորման համար²: Կարևոր է նաև այն, որ Տրդատի կերպարը գահակալման տարբեր ժամանակներում փոփոխվում է՝ բժշկումից հետո որակվելով իբրև երանելի արքա³:

Ընդհանուր առմամբ Ի. Վաշչևան, գնահատելով Ազաթանգեղոսին, գալիս է այն եզրակացության, որ հեղինակը տեղական ավանդապատումային ոճը համապատասխանեցրել է նոր՝ բիբլիական հղացքներին: Դրա վառ դրսևորումներն են աստվածաշնչյան ընդմիջարկություններն Ազաթանգեղոսի երկում: Բացի այդ, «Հայոց պատմություն»-ը բավականին ամուր հիմք է նախապատրաստում քրիստոնեության գաղափարական հետագա կառուցարկման համար:

2. Մովսես Խորենացու պատմական գաղափարի պարադոքսները

Ի. Վաշչևայի հետազոտություններում հաճախ խոսվում է նաև հայոց պատմահայր Մովսես Խորենացու մասին: Հեղինակը, հակիրճ անդրադարձ կատարելով Մովսես Խորենացու ապրած ժամանակաշրջանի շուրջ առկա վեճերին, հակված է նրան համարել 5-րդ դարի հեղինակ: Ի. Վաշչևան փորձել է հայոց պատմահոր երկը քննել «պատմության տեսության» լույսի ներքո⁴:

Հեղինակին ի սկզբանե հետաքրքրում է պատմության պատճառականության հղացքի հիմնախնդիրը: Ի. Վաշչևան այս թնջուկը փորձում է բացահայտել «Թեպետ և մենք փոքր ածու ենք...» հայտնի հատվածի մեկնաբանությամբ: Թեև Մովսես Խորենացին, սկզբնապես հակված լինելով պահպանել նախկինում գործած հերոսությունների մասին հիշողությունը, իր «Հայոց պատմութեան» էջերում կատարում է կառուցվածքային շեղումներ: Այս առումով Ի. Վաշչևայի համար ակնհայտ է, որ Մովսես Խորենացին գրում է ոչ թե Հայաստանի, այսինքն՝ պետականության և պետական համակարգերի, այլ Նոյից և Հայկից սերող ժողովրդի պատմությունը: Ջարմանալիորեն հայ ժողովրդի պատմության թատերաբեմ են իջնում Հին Արևելքի նշանավոր գործիչներ Նաբուգոդոնոսորը, Շամիրամը, Սարդանապալը, Կյուրոս Մեծը և այլք: Հեղինակի կարծիքով Մովսես Խորենացին փորձում է իր ժողովրդի պատմությունը կապել Հին աշխարհի նշանավոր անցքերին և հերոսներին⁵:

Տարածության և սահմանի հղացքների Մովսես Խորենացու հարացույցը մինչ օրս ըստ արժանվույն լուսաբանված չէ: Ընդհանուր առմամբ սահմանն իր մեջ «պարառում» է բազում հղացքներ: Խնդիրը հատկապես բարդանում է վաղմիջնադարյան պատմագրության տիպաբանման պարագայում: Մովսես Խորենացին սահմանն ընկալվում է մի քանի հարացույցներով: Առաջինն իհարկե պետական սահմանն է: Հայոց պատմահայրը, խոսելով մեր հարևան երկրների մասին, հետաքրքիր տեղեկություններ է տալիս

¹ Акопян П., Ващева И., указ. соч, с. 210.

² Կոնստանտինոս Մեծի հաղթանակով Արևելքի երկրների գահակարգում առաջնայնության դերը անցնելու էր Հռոմեական կայսրությանը: Դրանով Հայաստանը զրկվելու էր հին աշխարհի երկրների գահակարգում իր զբաղեցրած բարձր դիրքից: Իսկ հայոց արքա Տրդատ Մեծի քրիստոնյա առաջին տիրակալ լինելու հանգամանքը «խանգարում էր» Եվսեբիոս Կեսարացուն: Հին աշխարհի երկրների գահակարգում Հայաստանի զբաղեցրած դիրքի մասին մանրամասն Տե՛ս Օհանյան Մ., Հայաստանը հին աշխարհի երկրների գահակարգում, «ՊԲՀ», 2001, № 2, էջ 207-235

³ Համանման խնդիր առկա է նաև Կոնստանտինոս Մեծի եկեղեցական պատմագիրների կողմից ստեղծված կերպարի հետ, որը դժվար է միանշանակ գնահատել: Եկեղեցական պատմագիրների կողմից զովաբանվել է ոչ միայն նրա առաքինի վարքը և բարեպաշտությունը, այլև ընդհանրական եկեղեցու միասնության պահպանումը (Նիկիայի ժողով) և պետականաստեղծ գործունեությունը (Կոնստանդնուպոլսի հիմնումը և օրենքների հրապարակումը): Ващева И., Константин Великий: Вариации образа в христианских историях поздней античности, "Вестник" Нижегородского университета им. Н. И. Лобачевского, № 4, 2013, с. 58

⁴ Տե՛ս Ващева И., Парадоксы исторической концепции Мовсеса Хоренаци, Диалог с временем, вып. 40, М., 2012, с. 219-230.

⁵ Նույն տեղում, էջ 221:

նաև հեռավոր Եգիպտոսի և Չինաստանի վերաբերյալ: Մյուս կարևոր հարացույցը հայ ընկերային և ներհանրային կյանքի սահմանն է: Այստեղ հիմնականում խոսվում է իշխանական տների և գյուղ-քաղաք բաժանման վերաբերյալ¹:

Մյուս կարևոր խնդիրը հայոց տարածական ընդգրկման հիմնահարցում Եդեսիայի կամ Ուռհայի հանդես գալն է: Խոսելով Աբգար թագավորի առաջին քրիստոնյա թագավորը լինելու մասին՝ Մովսես Խորենացին փորձում է նրան հայացնելով կապ տեսնել հայերի քրիստոնյա լինելու հետ: Բացի այդ Աբգարը ոչ միայն մարմնավորում է աշխարհիկ իշխանությունը (առաջին արքա Նինոսից եկող), այլև քրիստոնեական պատմությունը, որտեղ հայերն առանցքային դեր են կատարում:

Հաջորդ յուրահատուկ ժամանակագրական հնարքը Ի. Վաչչևան տեսնում է Աբգար-Օկտավիանոս-Քրիստոս համաժամանակեցման (սինխրոնիզացիա) մեջ²: Սրանով պատմահայրը փորձում է «լեգիտիմացնել» հայերի քրիստոնյա լինելը և Աբգարին բերում է գլխավոր թատերաբեմ:

Իր պատմափիլիսոփայական հարացույցը մշակելիս Մովսես Խորենացին հսկայական աշխատանք է կատարել: Բնականաբար, իր հայացքները շարադրելիս քերթողահայր պատմիչը ճամփորդում էր պատմության խորքերը՝ գալիք իրադարձություններն ըմբռնելու և մոդելավորելու համար³:

Սեփական երկրի պատմության համեմունը տարածաշրջանային տերությունների պատմական անցքերով անսովոր չէր Խորենացու հանրալսարանի համար: Նման մոտեցումը լայնորեն կիրառվում էր **Pax Christiana**-ի համակարգում: Ի. Վաչչևայի կարծիքով Խորենացին միտված է ներկայացնելու ոչ թե Հայաստանի պատմությունը, այլ քրիստոնյա կայսրության կյանքում Հայաստանի ունեցած դերակատարումը: Բացի այդ հայերը դառնում են աստծուց ընտրված ժողովուրդ՝ ուն միջոցով իրականանալու են աստվածային ձեռնարկները⁴:

Անշուշտ, լինելով ժամանակի ուսյալ անձանցից մեկը՝ Մովսես Խորենացին չէր կարող ծանոթ չլինել Եվսեբիոս Կեսարացու աշխատություններին: Դրա վկայություններն են Եվսեբիոսի անվան հիշատակությունները և նրա երկերից կատարված ընդմիջարկությունները: Մ. Կրիվովի հաղորդմամբ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը» Մովսես Խորենացու ձեռքի տակ չի եղել և նա Եվսեբիոս Կեսարացու մասին խոսել է հիշողությամբ: Ավելին, ռուս հետազոտողը հակված է կարծելու, որ Մովսես Խորենացին օգտագործել է մի շարք հունական աղբյուրներ՝ Եվսեբիոսի Կեսարացուց օգտվելով⁵: Մ. Կրիվովի հաղորդումը առանձնահատուկ քննության է ենթարկել Ա. Թոփչյանը: Նրա կարծիքով Մովսես Խորենացու հունալեզու աղբյուրների խնդիրը բավականին հակասական քննությունների առիթ է տվել: Միանշանակ պարզ է, որ Բերոսոսի, Ալեքսանդր Բազմավեպի, Աբդիհենոսի և Կեփալիոնի հիշատակման հիմքում Եվսեբիոս Կեսարացու «ժամանակագրությունից» բացի եղել են կա՛մ նրանց բուն՝ երկերը, կա՛մ հատվածաբար, կա՛մ էլ մեկ այլ աղբյուրի միջոցով: Հուլիոս Աֆրիկանոսի «ժամանակագրության» քննարկումը կարևոր է՝ պարզելու համար Խորենացու աղբյուրների օգտագործման մեթոդների ուսումնասիրությունը⁶:

Առաջին հայացքից ավելի անհասկանալի է Մովսես Խորենացու վերաբերմունքը Տիգրան Մեծի նկատմամբ: Թվում է, թե նա պետք է ներկայացվեր իբրև նշանավոր միապետ և քաղաքական գործիչ, սակայն Տիգրանի կերպարը բավականին անհասկա-

¹ Հ. Հարությունյանի կարծիքով Մ. Խորենացու նման պատմագրական հնարքը կարելի է բացատրել այն տեսությամբ, որ միայն ներքին և արտաքին սահմանների առկայությունն է, որ կարող է հաղորդել գոյութենական նշանակություն և ներդաշնակ կառույց: Մանրամասն Տե՛ս Հարությունյան Հ., Սահմանը Մովսես Խորենացու պատմահայեցողության մեջ, «Պատմություն և կրթություն», 1-2, Ե., 2005, էջ 69-78:

² Հիսուս Քրիստոսի հետ համաժամանակեցումը և շատ հաճախ կերպարանմանեցումը բնորոշ էր վաղ եկեղեցական պատմագրությանը: Մասնավորապես, նույնատիպ հնարքներ է կիրառում Եվսեբիոս Կեսարացին Կոնստանտինոս Մեծի կերպարի հետ կապված:

³ Степанян А., Развитие исторической мысли в Древней Армении, Е., 1991, с. 189.

⁴ Ващева И., Парадоксы исторической концепции Мовсеса Хоренаци, с. 229.

⁵ Кривов М., “Церковная история” Евсевия Кесарийского как источник Мовсеса Хоренаци, “Византийский временник”, т. 59, М., 2000, с. 108-115.

⁶ Թոփչյան Ա., Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Ե., 2001, էջ 156-162:

նալի է: Այս խնդիրը զարմացրել է Ի. Վաշչևային: Սակայն հեղինակը խուսափում է որոշակի պատասխան տալ և բացատրել այս պարադոքսը: Մեր կարծիքով այստեղ խնդիրը պետականակենտրոն և մշակութակենտրոն քաղաքականության մեջ է: Տիգրանի ժամանակ կարևոր էր գործքը, իսկ Մովսես Խորենացու ժամանակ կարևոր է դառնում գրույթը: Նմանատիպ խնդիր է առկա նաև Տիգրանի հաջորդ Արտավազդ արքայի կերպարի ներկայացման մեջ¹:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Վաղմիջնադարյան եկեղեցական և հայկական ոսկեդարյան պատմագրության ուսումնասիրման գործում հետաքրքիր և նոր մոտեցումներ է ցույց տալիս արդի ռուս պատմագետ Ի. Վաշչևան: Թեև նրա հետազոտություններում շատ հաճախ իբրև առաջնային սկզբնաղբյուր ծառայում են անտիկ (հունա-հռոմեացի) և վաղ քրիստոնյա պատմագիրները, սակայն հեղինակը փորձում է տալ մի շարք խճողված հարցերի պատասխաններ՝ զուգակշռելով վաղմիջնադարյան հեղինակների երկերը և պատմագրական մեթոդները: Միով բանիվ, Ի. Վաշչևայի հետազոտությունների ուսումնասիրությունը կարևորվում է հայկական վաղմիջնադարյան պատմագրության առկա խնդիրների լուծման համար:

Гурген Мурадян, Армянская раннесредневековая историография в научных исследованиях Ирины Ващевой,-В статье автор рассматривает проблему армянской историографии в научных работах одного из современных российских историков. Сфера научного интереса И. Ващевой относится к одной из наиболее спорных проблем современной историографии. Изучая эпоху поздней античности И. Ващева рассматривает и проблему раннесредневековой историографии. Особенно проблемными автор склонен считать работы Агатангелоса и Мовсеса Хоренаци. Целью российского историка является сравнение армянских авторов с авторами античного мира. Работы И. Ващевой играют важную роль в разрешении некоторых вопросов армянской историографии.

Ключевые слова: Евсевий Кесарийский, историография Золотого века, Агафангел, Мовсес Хоренаци, идея истории, агиография

Gurgen Muradyan, The problem of early medieval Armenian historiography in Irina Vashcheva's researches,-In the article the author considers the problem of Armenian historiography in the scientific researches of one of the modern Russian historians. The scope of scientific interest of I. Vashcheva refers to one of the most controversial problems of modern historiography. Studying the era of late antiquity, I. Vashcheva considers the problem of early medieval historiography too. The author is inclined to consider especially problematic the work of Agafangel and Movses Khorenatsi. The goal of the Russian historian is to compare Armenian authors with their ancient colleagues. The works of I. Vashcheva play an important role in the resolution of certain issues of Armenian historiography.

Keywords: Eusebius of Caesarea, the historiography of the Golden Age, Agafangel, Movses Khorenatsi, the idea of history, hagiography

¹ Նմանատիպ հարցերը լավագույնս լուսաբանվել են Ա. Ստեփանյանի կողմից: Մանրամասն Տե՛ս Ստեփանյան Ա., Պատմության կերպարի խնդիրները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արտաշեսյան դարաշրջան, Ե., 2012, էջ 68-140: